Ձև N4

Տեղեկանք

2014 թվականի գերակա խնդիրների և միջոցառումների ծրագրի տարեկան իրականացման արդյունքների

Միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Միջոցառումների անվանումները**	**Միջոցառումների կատարման արդյունքները**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն /նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով/	Հավելված 1, կետ 1	«Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախա-գիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2014 թվականի մարտի 21-ին թիվ 07/21/1476-14 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: Այնուհետև ՀՀ կառավարության եզրակացությամբ առաջարկվել է ՀՀ օրենքի նախագիծը լրամշակել: Մասնավորապես «էլեկտրոնային փաստաթուղթ» հասկացությունը հստակեցնելու նպատակով մշակվել է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ կառավարության 30.05.20014թ թիվ 02/24.6/8326-14 հանձնարարականի համաձայն՝ ուղարկվել է կարգավորման ազդեցության գնահատման և շահառու մարմինների կարծիքին: Կարծիքներն ու կարգավորման ազդեցության գնահատականները ստացվել են ու ամփոփվել, իսկ այժմ նախագիծը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության: Նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը և ՀՀ կառավարության կարծիքին համապատասխան՝ կրկին լրամշակվել է: Մասնավորապես, կատարվել են նաև համապատասխան փոփոխություններ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և	

			անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքներում: Այդ պատճառով նախագծերը կրկին ներկայացվել էին կարգավորման ազդեցության գնահատման և պետական իրավական փորձաքննության: Ստացված կարծիքները ամփոփվել են և նախագծերը սահմանված կարգով ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագծերը 18.09.2014թ քննարկվել են ՀՀ կառավարության կողմից և արժանացել հավանության: Ներկայումս ՀՀ օրենքի նախագիծը քննարկվել է Ազգային Ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստում և ընդգրկվել է ԱԺ 01.12.2014թ չորսօրյա նիստերի օրակարգ:	
	Հավելված 1, կետ 2	«Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» ՀՀ կառավարու-թյան որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014թ. մարտի 4-ին թիվ 03/16/1077-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների հողի հարկ վճարողների և ոռոգման ջուր օգտագործողների համար 2014 թվականին Հայաստանի Հանրապետության Արարատի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետարաններին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ հաշվի են առնվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված համայնքների ցանկը, համապատասխան մարզպետարանների կողմից ներկայացված նշված համայնքների հողօգտագործողների հարկերը և ՀՀ ՏԿՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից ներկայացված ջրօգտագործողների վարձավճարները: ՀՀ կառավարության կողմից ընդունվել է 27.03.14թ. N338-Ա որոշումը:	
	Հավելված 1, կետ 3	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N 641-Ն և 2007 թվականի ապրիլի 19-ի N 465-Ն որոշումներում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 22-ի N 641-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 465-Ն որոշման մեջ փոփոխություններ	

		կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել 2014թ. հունիսի 5-ի թիվ 03/16/2953-14 գրությամբ: ՀՀ կառավարության կողմից վերոնշյալ նախագծերն ընդունվել են՝ համապատասխանաբար ս.թ. հուլիսի 17-ին թիվ 732-Ն և ս.թ. հուլիսի 17-ին թիվ 733-Ն ՀՀ կառավարության որոշումները:	
	Հավելված 1, կետ 4	«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախա-գիծը (Կ-570-29.07.2014SS-010/0) 08.09.2014թ.-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի չորսօրյա նիստերի օրակարգում:	
	Հավելված 1, կետ 5	«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ ֆինանսական համահարթեցման համակարգը գործում է 1998 թվականից, երբ տեղական ինքնակառավարման մարմինները նոր էին կազմավորվել, և նրանց բյուջեների եկամտային մասերն ու ֆինանսական կարողությունները շատ փոքր էին: Բացակայում էին ֆինանսական կարողությունների համահարթեցման առավել բազմագործոն մեխանիզմներ կիրառելու համար անհրաժեշտ հաշվարկային տվյալները: Ներկայումս իրավիճակը փոխվել է, ինչով և պայմանավորված է ֆինանսական համահարթեցման նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվելու է մի քանի հիմնարար սկզբունքների հիման վրա՝ - հաշվի առնելով ՀՀ համայնքների բյուջեներում սեփական եկամուտների ցածր մակարդակը՝ ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները պետք է հատկացվեն պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով ավելի հարուստ համայնքների եկամտային մասից այդ նպատակի համար միջոցների գանձումը (բացասական դոտացիա), - համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք	

			են ընդունվելու համայնքի հաշվարկային եկամտային ունակությունների և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները: Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով և առաջին ընթերցմամբ ընդունվել է: Լրամշակելու նպատակով այն վերադարձվել է: Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել է Եվրոպայի խորհուրդ փորձաքննության և ստացվել են համապատասխան առաջարկություններ: Եվրախորհրդի կողմից իրականացվող՝ "Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը" ծրագրի շրջանակում 29.09.2014թ. կայացել են եռօրյա աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում համապատասխան պետական մարմինների, Եվրախորհրդի և տեղական փորձագետների մասնակցությամբ քննարկվել են Հայաստանում ֆինանսական համահարթեցման հայեցակարգի, ֆինանսական համահարթեցման օրենքի նախագծի հիմնական մոտեցումները: Նշված բոլոր միջոցառումների արդյունքում նոր օրենքի նախագիծը լրամշակվել էր և ներկայացվելու էր ՀՀ կառավարություն: Նոր օրենքի նախագիծը քննարկվել են 2014թ. Ջերմուկ քաղաքում կայացած գյուղական համայնքների 4-րդ համաժողովի ընթացքում, որին մասնակցել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ում հանձնարարականի համաձայն՝ նախագիծը պետք է նորից լրամշակվի /հաշվի առնելով նոր չափորոշիչներ/՝ համայնքներում լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելով: Իրականացվելու են նաև ուսուցողական այցեր՝ տեղերում ծանոթանալու համար լավագույն փորձին և համայնքներում ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կիրարկման արդյունքներին, ինչպես նաև ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների մշակման մեթոդաբանությանը: Միջոցառումների սույն կետը /նախարարության	

			առաջարկությամբ/ համարվել է կատարված և հանվել 2014թ. միջոցառումների ցանկից. այն կներկայացվի ՀՀ կառավարություն 2015թ-ին՝ պատրաստ լինելուն պես:	
	Հավելված 1, կետ 6	Գյուղական համայնքների 4-րդ համաժողովի նախապատրաստում և անցկացում	«Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության քննարկման է ներկայացվել 06.10.2014թ. թիվ 03/16/5432-14 գրությամբ: ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» թիվ 1174-Ն որոշմամբ հաստատվել է վերոհիշյալ որոշման նախագիծը: Ս.թ. նոյեմբերի 7-8-ը ՀՀ Վայոց ձորի Ջերմուկ քաղաքում անցկացվել է «Գյուղական համայնքների 4-րդ համաժողով»-ը: Համաժողովին մասնակցել են պետական կառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Յուրաքանչյուր մարզ մասնակցում էր մարզպետի գլխավորությամբ առանձին պատվիրակությամբ, որի կազմում ընդգրկված են եղել թվով տասը համայնքապետեր, մարզում համայնքի կին ղեկավարներ և ավագանու հինգ անդամներ: Միջոցառումը նպատակ ուներ տեղական ինքնակառավարման համակարգի և գյուղական համայնքների ամենաարդիական խնդիրների քննարկման, փորձի փոխանակման, իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով աջակցել գյուղական համայնքների կայուն զարգացմանը:	
	Հավելված 1, կետ 7	Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծային փաթեթը ՀՀ կառավա-ություն ներկայացնելը	«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	

			լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը 28.11.2014թ. №03/16/6471-14 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Կարևորելով նախագծերով ներդրվող ինստիտուտների (բնակավայրի ընդհանուր ժողովի և համայնքի ղեկավարի վարչական ներկայացուցչի) ներդրումը՝ մատնանշվել է այդ ինստիտուտների ներդրման հետ կապված յուրաքանչյուր տարրին (հաշվի առնելով շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները) մանրամասնորեն անդրադառնալու անհրաժեշտությունը: Նոյեմբերի 28-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվել են նաև Եվրոպայի Խորհրդի փորձագետների կարծիքները (որոնց հետ նախնական քննարկումներ անց են կացվել 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, իսկ վերջնական ամփոփումը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի հունվարի երկրորդ տասնօրյակում: Այդ առաջարկությունները նույնպես անհրաժեշտ է քննարկել պետական մարմինների և փորձագիտական հանրույթի հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկի համար անհրաժեշտ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվելու, ինչպես նաև խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեներ նախապատրաստելու և անցկացնելու համար կպահանջվի ներկայացվող օրենքների լրամշակման համար բավականաչափ ժամանակ՝ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը քննարկել նախարարական կոմիտեի նիստում և դեռևս ձեռնպահ մնալ այն ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելուց: ՀՀ կառավարության աշխատակազմից նախագծային փաթեթը ս.թ. դեկտեմբերի 12-ին վերադարձվել է լրացուցիչ քննարկման համար:	
	Հավելված 1, կետ 8	«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվական-ների սոցիալ-տնտեսական զարգացման	2014թ. նոյեմբերի 4-ին թիվ 03/15/6008-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018	

		ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11.12.14թ. N1459-Ն որոշմամբ:	
	Հավելված 1, կետ 9	«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014թ. հոկտեմբերի 24-ին թիվ 03/15/5856-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 17.12.2014թ. թիվ 02/24.13/[221889]-14արձ. կետ 4-ի համաձայն՝ Նախագիծը համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ և 27.12.2014թ. թիվ 01/15/7097-14 գրությամբ լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված 1, կետ 10	«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014թ. հոկտեմբերի 31-ին թիվ 03/15/5936-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11.12.14թ. N1458-Ն որոշմամբ:	
	Հավելված 1, կետ 11	«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014թ. հոկտեմբերի 294-ին թիվ 03/15/5928-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: 17.12.2014թ. թիվ 02/24.13/[221889]-14արձ. կետ 5-ի համաձայն՝ Նախագիծը համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ և 24.12.2014թ. թիվ 01/15/6998-14 գրությամբ լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
	Հավելված 1, կետ 12	«Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014թ. նոյեմբերի 27-ին թիվ 03/15/6405-14 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:	

			17.12.2014թ. թիվ 02/24.13/[221889]-14արձ. կետ 6-ի համաձայն՝ Նախագիծը համաձայնեցվել է ՀՀ ֆինանսների նախարարության հետ և 25.12.2014թ. թիվ 01/15/7043-14 գրությամբ լրամշակված տարբերակը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:	
Գերակա խնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ				
Պատասխանատու մարմինը	**Ծրագրի կետը**	**Գերակա խնդիրները**	**Գերեկա խնդրի կատարմանն ուղղված քայլերը**	**Կարծիք**
1	2	3	4	5
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն /նախկին ՀՀ տարածքային կառավարման նախարարության մասով/	**<u>Հավելված N 2</u>** **կետ1.**	**Բարելավել համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետությունը, կատա-ռելագործել ֆինանսական համա-հարթեցման մեխանիզմները՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերվող օժանդակությունը** - ՀՀ պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող համահարթեցման դոտացիաների տրամադրման նոր մեխանիզմների անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ստեղծում այն հաշվով, որ դրանք լինեն ավելի նպատակային, հաշվի առնեն համայնքների միջև առկա օբյեկտիվ տարբերությունները՝ հատկապես եկամտային ունակությունների և ծախսային կարիքների մասով.	Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ ֆինանսական համահարթեցման համակարգը գործում է 1998 թվականից, երբ տեղական ինքնակառավարման մարմինները նոր էին կազմավորվել, և նրանց բյուջեների եկամտային մասերն ու ֆինանսական կարողությունները շատ փոքր էին: Բացակայում էին ֆինանսական կարողությունների համահարթեցման առավել բազմագործոն մեխանիզմներ կիրառելու համար անհրաժեշտ հաշվարկային տվյալները: Ներկայումս իրավիճակը փոխվել է, ինչով և պայմանավորված է ֆինանսական համահարթեցման նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը: Ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվելու է մի քանի հիմնարար սկզբունքների հիման վրա՝	

			- հաշվի առնելով ՀՀ համայնքների բյուջեներում սեփական եկամուտների ցածր մակարդակը. ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները պետք է հատկացվեն պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով ավելի հարուստ համայնքների եկամտային մասից այդ նպատակի համար միջոցների գանձումը (բացասական դոտացիա), - համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք են ընդունվելու համայնքի հաշվարկային եկամտային ունակությունների և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները: Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով և առաջին ընթերցմամբ ընդունվել է: Լրամշակելու նպատակով այն վերադարձվել է:	
		- գնահատել սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները, պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նորմատիվների ներմուծմամբ պայմանավորված դրանց դինամիկան:	Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել է Եվրոպայի խորհուրդ փորձաքննության և ստացվել են համապատասխան առաջարկություններ: Եվրոպայի խորհուրդ - Հայաստան գործողությունների ծրագրով մեկնարկած “Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը” ծրագրի շրջանակներում ներգրավվել է տեղացի փորձագետ, որի հետ համատեղ լրամշակվել է նոր օրենքի նախագիծը՝ հաշվի առնելով Ստրասբուրգի համալսարանի փորձագետի առաջարկությունները: Ուսումնասիվել է միջազգային փորձը՝ մասնավորապես այն երկրների, որտեղ ներդրված համահարթեցման մեխանիզմները համարվում են ավելի հաջողված և կիրառելիության առումով ավելի մատչելի: Այդ նպատակով մշակվել էր հարցաշար Եվրախորհրդի անդամ պետություններում ֆինանսական համահարթեցման չափանիշների,	

			ընթացակարգերի և մեխանիզմների վերաբերյալ տեղեկությունների ստացման նպատակով, և այն սահմանված կարգով ներկայացվել էր Եվրոպայի խորհրդի “CDDG” “ԺԿԵՀ” /Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական հանձնաժողով/ -ի անդամներին: ԵԽ անդամ երկրների փորձի ուսումնասիրության արդյունքները մեզ հնարավորություն ընձեռեցին՝ իրականացնելու աշխատանքներ՝ գնահատելու համար ՏԻՄ-ի սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները: Եվրախորհրդի կողմից իրականացվող՝ "Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը" ծրագրի շրջանակում 29.09.2014թ. կայացել են եռօրյա աշխատանքային հանդիպումներ, որոնց ընթացքում համապատասխան պետական մարմինների, Եվրախորհրդի և տեղական փորձագետների մասնակցությամբ քննարկվել են Հայաստանում ֆինանսական համահարթեցման հայեցակարգի, ֆինանսական համահարթեցման օրենքի նախագծի հիմնական մոտեցումները: Նշված բոլոր միջոցառումների արդյունքում նոր օրենքի նախագիծը լրամշակվել էր և ներկայացվելու էր ՀՀ կառավարություն: Նոր օրենքի նախագիծը քննարկվել է 2014թ. Ջերմուկ քաղաքում կայացած գյուղական համայնքների 4-րդ համաժողովի ընթացքում, որին մասնակցել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ում հանձնարարականի համաձայն՝ նախագիծը պետք է նորից լրամշակվի /հաշվի առնելով նոր չափորոշիչներ/՝ համայնքներում լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելով: Իրականացվելու են նաև ուսուցողական այցեր՝ տեղերում ծանոթանալու լավագույն փորձին և համայնքներում ֆինանսական համահարթեցման մեխանիզմների կիրարկման արդյունքներին, ինչպես նաև ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների իրականացման կարգերի, չափորոշիչների ու նոր-	

			մատիվների մշակման մեթոդաբանությանը: Միջոցառումների սույն կետը /նախարարության առաջարկությամբ/ համարվել է կատարված և հանվել է 2014թ. միջոցառումների ցանկից. այն կներկայացվի ՀՀ կառավարություն 2015թ-ին՝ պատրաստ լինելուն պես:	
	<u>Հավելված N 2</u> **կետ2.**	**Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի մեկնարկ** - խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպմանն ուղղված նախապատ-րաստական աշխատանքների իրականացում. - վարչատարածքային բարեփոխման իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակում և դրանց քննարկում ՀՀ կառավարությունում:	2014 թվականի 1-ին կիսամյակում համայնքների խոշորացման գործընթացն ընթացել է մի քանի ուղղություններով. • համայնքների խոշորացման ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերի մշակման նախապատրաստում, ընդ որում՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապե տության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերն արդեն իսկ մշակվել են: «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ընտրական օրենսգրքի հետ հակասությունների վերացման անհրաժեշտությունից ելնելով՝ 06.06.2014թ. ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի մոտ կայացած խորհրդակցության ընթացքում ՀՀ արդարադատության նախարարին առաջարկվել է ներկայացնել առաջարկություն՝ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ նոր օրենքի մշակման ժամկետների վերաբերյալ: • գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացում՝ տարատեսակ պարզաբանումների տրամադրում (համայնքների բնակիչների, մարզային և համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում խոշորացվող համայնքներում, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում, հեռուստատեսությամբ, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներով	

			հարցազրույցների կազմակերպում և այլն)՝ ըստ անհրաժեշտության՝ համագործակցելով Հայաստանում գրանցված միջազգային կազմակերպությունների հետ: Մասնավորապես. ✓ ս.թ. մարտի 5-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում կայացել է «Հայաստանի Հանրապետության համայնքների խոշորացման գործընթաց» թեմայով քննարկումը, որին մասնակցել են ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ հանրային խորհրդի, տեղական հասարակական և միջազգային կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները: Քննարկումների ընթացքում հնչեցված հարցերի և կատարված առաջարկությունների արդյունքում մշակվել են երկու հարցաշարեր՝ նախատեսված հասարակական կազմակերպությունների և լայն շրջանակների, ինչպես նաև փորձագիտական և մասնագիտական շրջանակների համար: Հարցաշարերը զետեղվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության պաշտոնական կայք-էջում: ✓ նախարարության պաշտոնյաների կողմից կատարվել են այցեր՝ ՀՀ Սյունիքի (Տաթևի և Մեղրու համայնքային փնջերի պիլոտային ծրագրերի քննարկում), ՀՀ Վայոց ձորի (Զառիթափի և Ջերմուկի համայնքային փնջեր), ՀՀ Տավուշի (Դիլիջանի համայնքային փունջ) և ՀՀ Լոռու (Թումանյանի համայնքային փունջ) մարզեր, որտեղ վերջիններս հանդիպել են մարզային և համայնքային պաշտոնյաների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ, քննարկել համայնքների խոշորացմանն առնչվող առավել խնդրահարույց հարցեր: ✓ «Counterpart International» ԱՄՆ ՄԶԳ կողմից կազմակերպվել են Վեդու և Դիլիջանի համայնքների երիտասարդական խմբերի (ավագանու անդամներ, համայնքային ծառայողներ) համար նախատեսված թեմատիկ քննարկումներ: ✓ «Տնտեսական լրագրողների ակումբ» ՀԿ-ի կողմից Գյումրու, Վանաձորի, Արմավիրի,	

			Մարտունու քաղաքային համայնքների տեղական լրագրողների համար կազմակերպվել են լսումներ՝ համայնքների խոշորացման թեմայով: ✓ Ս.թ. մարտ ամսին Գերմանական միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ կազմակերպված, փորձի փոխանակման նպատակով Վրաստանի Հանրապետություն կատարված այցելության ընթացքում ուսումնասիրվել են Վրաստանի օրենսդրությունը (տեղական ինքնակառավարման և ընտրական ոլորտները), ինչպես նաև այնտեղ իրականացված վարչատարածքային բարեփոխումների մոդելը: ✓ մայիսի 17-18-ը Աղվերանի համալիրում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) "Համայնքների զարգացում Հարավային Կովկասում" ծրագրի աջակցությամբ կազմակերպվել են թեմատիկ քննարկումներ շուրջ 25 լրատվամիջոցների ներկայացուցիչների համար՝ Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների գործընթացի մասին իրազեկելու նպատակով: ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը մշակվել և ուղարկվել են Եվրոպայի Խորհրդի փորձագետներին: Ս.թ. հոկտեմբերի 1-ին տեղի է ունեցել վերջիններիս մասնակցությամբ իրենց կողմից արված առաջարկությունների քննարկում: ✓ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	

			լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը 28.11.2014թ. №03/16/6471-14 գրությամբ ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: Կարևորելով նախագծերով ներդրվող ինստիտուտների (բնակավայրի ընդհանուր ժողովի և համայնքի ղեկավարի վարչական ներկայացուցչի) ներդրումը՝ մատնանշվել է այդ ինստիտուտների ներդրման հետ կապված յուրաքանչյուր տարրին (հաշվի առնելով շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները) մանրամասնորեն անդրադառնալու անհրաժեշտությունը: Նոյեմբերի 28-ին ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվել են նաև Եվրոպայի Խորհրդի փորձագետների կարծիքները, որոնց հետ նախնական քննարկումներ անց են կացվել 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, իսկ վերջնական ամփոփումը նախատեսվում է իրականացնել 2015 թվականի հունվարի երկրորդ տասնօրյակում: Այդ առաջարկությունները նույնպես անհրաժեշտ է քննարկել պետական մարմինների և փորձագիտական հանրույթի հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքների խոշորացման գործընթացի մեկնարկի համար անհրաժեշտ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունելու, ինչպես նաև խոշորացվող համայնքներում տեղական հանրաքվեներ նախապատրաստելու և անցկացնելու համար կպահանջվի ներկայացվող օրենքների լրամշակման համար բավականաչափ ժամանակ՝ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը քննարկել նախարարական կոմիտեի նիստում, և դեռևս ձեռնպահ մնալ այն ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելուց: ՀՀ կառավարության աշխատակազմից նախագծային փաթեթը ս.թ. դեկտեմբերի 12-ին վերադարձվել է լրացուցիչ քննարկման համար:	

	<u>Հավելված N 2</u> **կետ3.**	**Համայնքային ենթակայության կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում**		
		- քաղաքապետարանների (գյուղապետարանների) աշխատակազմերի, ինչպես նաև համայնքային ենթակայության կազմակերպությունների հաստիքացու-ցակների ու համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց մասին տեղեկատվական էլեկտրոնային բազայի ձևավորում.	Տեղեկատվական բազայի ձևավորման Էլեկտրոնային ծրագիրը մշակվել և ներդրվել է: Ներկայումս այն գտնվում է տվյալների ներբեռնման և, դրան զուգահեռ՝ ծրագրի գործիքակազմի շտկման փուլում:	
		- քաղաքապետարանի (գյուղապետարանի) աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմա-կերպությունների աշխատողների նվազագույն աշխատավարձերի բարձրացմամբ պայմանավորված՝ 2014 թվականին անհրաժեշտ քայլերի ձեռնարկում:	Համայնքապետարանների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատողների նվազագույն աշխատավարձերի, ինչպես նաև գազի և էլելտրաէներգիայի սակագների բարձրացմամբ պայմանավորված՝ պետությունը համայնքներին փոխհատուցում է տվել 2,0 մլրդ դրամի չափով: 2014թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձի նոր բարձրացման հետ կապված վճարումները համայնքները կատարելու են իրենց հաստիքների և ծախսերի օպտիմալացման արդյունքում տնտեսված միջոցների հաշվին: «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով Հայաստանի Հանրապետությունում ս.թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձը 50 հազ. դրամի չափով սահմանելու հետ կապված՝ համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ բյուջետային ծախսերի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացվել և ս.թ. հուլիսի 31-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության	

			համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» թիվ 792-Ն որոշումը:	